Հիսուս Քրիստոսի ավետարանի

Վերականգնումը

Աստված ձեզ սիրող Երկնային Հայրն է

Աստված ձեր Երկնային Հայրն է: Նա գիտի ձեզ անհատապես և սիրում է ձեզ ավելի, քան կարող եք պատկերացնել: Նա ուզում է, որ դուք երջանիկ լինեք այս կյանքում և հավերժության մեջ:

Իր նպատակն իրագործելու համար, Նա տվել է մի ծրագիր, որը կոչվում է Հիսուս Քրիստոսի ավետարան*: Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է. Նրա կյանքը և ուսմունքները պարգևում են խաղաղություն այս կյանքում և ուրախություն՝ հավերժության մեջ:

Մեր Երկնային Հայրը ետ բերեց վերականգնված, աստվածային ճշմարտությունները, որ դուք կարողանաք սովորել և ապրել: Այդ ճշմարտություններն ի սկզբանե հայտնվել էին մարգարեներին:

Ավետարանն օրհնում է ընտանիքներին և անհատներին

Հիսուս Քրիստոսի ավետարանը օրհնում է բոլոր նրանց, ովքեր ընդունում են այն և ապրում են ըստ դրա: Ավետարանն ուսուցանելու և կիրառելու լավագույն վայրերից մեկը ընտանիքն է: Աստված հիմնել է ընտանիքները, որպեսզի երջանկություն պարգևի Իր զավակներին, հնարավորություն տա սիրով լի մթնոլորտում սովորել ճիշտ սկզբունքները և պատրաստի մեզ մահանալուց հետո վերադառնալ Իր մոտ: Թեպետ ընտանեկան հարաբերությունները կարող են ժամանակի ընթացքում վատթարանալ, սակայն մեր Երկնային Հայրը օրհնում է մեզ, երբ մենք ձգտում ենք հետևել Հիսուս Քրիստոսի ուսմունքներին: Այդ ուսմունքներն օգնում են մեզ ամրապնդել մեր ընտանիքները:

Երկնային Հայրը հայտնում է Իր ավետարանը

Որպես Իր ծրագրի մի մաս, Աստված ընտրում է մարգարեներ, ինչպիսիք էին՝ Ադամը, Նոյը, Աբրահամը և Մովսեսը: Մարգարեները՝

- Ուսուցանում են Աստծո մասին և հանդիսանում են Նրա Որդու, Հիսուս Քրիստոսի, հատուկ վկաները:
- Հայտնություն կամ հրահանգ են ստանում Տիրոջից:
- Ուսուցանում են ավետարանն աշխարհին և մեկնաբանում են Աստծո խոսքը:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Հիսուս Քրիստոսի ավետարանը կարող է ամրապնդել ձեր ընտանիքը:

Մարգարեները ստանում են քահանայությունը, կամ իշխանություն՝ Աստծո անունով խոսելու և գործելու համար՝ Նրա զավակներին առաջնորդելիս: Նրանք, ովքեր հետևում են մարգարեներին, ստանում են Աստծո խոստացած օրհնությունները: Նրանք, ովքեր մերժում են ավետարանը և Աստծո մարգարեներին, կորցնում են այդ օրհնություններն ու իրենց հեռացնում են Աստծուց: Նրանք, ովքեր մերժում են մարգարեներին և հրաժարվում Աստծուն հետևելու իրենց պարտավորությունից, հայտնվում են ուրացություն կոչվող վիճակում:

Հայտնված ճշմարտությունները կորսվում են, երբ մարդիկ մերժում են մարգարեներին:

Թեպետ Նրա զավակներից շատերը բազմիցս մերժել են Նրան ու Նրա մարգարեներին, մեր Երկնային Հայրը շարունակում է սիրել Իր զավակներին: Նա ցանկանում է մեզ տալ այն ամենը, ինչի կարիքը մենք ունենք, որպեսզի երջանիկ լինենք այժմ և վերադառնանք Նրա մոտ՝ մեր մահից հետո: Սուրբ գրությունները հայտնում են այն միջոցը, թե ինչպես է Աստված օգնության հասնում իր զավակներին, թեև մենք միշտ չէ, որ լսում ենք.

- Աստված մարգարե է ընտրում:
- Մարգարեն ուսուցանում է ավետարանը և առաջնորդում է մարդկանց:
- Աստված օրհնում է մարդկանց:
- Մարդիկ հետզհետե արհամարհում կամ չեն հնազանդվում մարգարեի ուսուցումներին: Նրանք, վերջիվերջո, մերժում են մարգարեին ու նրա ուսուցումները, և ընկնում են ուրացության մեջ:
- Ուրացության պատճառով, մարդիկ կորցնում են ավետարանի մասին գիտելիքը: Քահանայության իշխանությունը վերցվում է նրանցից:
- Երբ ճիշտ ժամանակ է և մարդիկ պատրաստ են կրկին հետևելու Նրան, Աստված ընտրում է մարգարե, վերականգնում է քահանայությունը և Եկեղեցին, և պատվիրում է մարգարեին՝ ուսուցանել ավետարանը:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Հին Կտակարանի մարգարեները գրել են Աստծո խոսքերը:



Հիսուս Քրիստոսը հիմնել է Իր Եկեղեցին

Արարման ժամանակից ի վեր, Աստծո զավակները անհամբեր սպասում էին Փրկիչ Հիսուս Քրիստոսի գալստին: Ինչպես մեր Երկնային Հայրը խոստացել էր, Նա ավելի քան 2,000 տարի առաջ երկիր ուղարկեց Իր Որդուն՝ Հիսուս Քրիստոսին:

Հիսուս Քրիստոսը ապրեց կատարյալ, անմեղ կյանքով: Նա հիմնեց Իր Եկեղեցին, ուսուցանեց Իր ավետարանը, և շատ հրաշքներ կատարեց: Նա ընտրեց տասներկու տղամարդկանց, որպեսզի լինեն Իր Առաքյալները, որոնց թվում էին Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը: Նա ուսուցանեց նրանց և նրանց տվեց քահանայության իշխանությունը, որպեսզի նրանք սովորեցնեն Իր անունով և կատարեն սրբազան արարողություններ, ինչպիսին մկրտությունն է:

Երբ Հիսուսը հիմնեց Իր Եկեղեցին, Նա հրահանգներ ստացավ մեր Երկնային Հորից: Այնուհետև Նա հրահանգներ տվեց Իր աշակերտներին: Հիսուսն ուսուցանեց Իր հետևորդներին, որ Աստծուց ստացված հայտնությունն է՝ վեմը, որի վրա Նա կկառուցի Իր Եկեղեցին:

Իր կյանքի վերջում, Հիսուս Քրիստոսը տառապեց և մահացավ բոլոր նրանց մեղքերի համար, ովքեր ապրել են կամ կապրեն երկրի վրա: Այս զոհաբերությունը կոչվում է Քավություն: Իր տառապանքի, մահվան և Հարության միջոցով Փրկիչը մեզ համար հնարավոր դարձրեց ներումը: Նրանք, ովքեր հավատում են Նրան, ապաշխարում են և պահում են Նրա պատվիրանները, ստանում են մեղքերի թողություն և լցվում են խաղաղությամբ ու ուրախությամբ:

Հիսուս Քրիստոսը կազմակերպեց Իր Եկեղեցին.

- *Նա կանչեց և կարգեց Առաքյալներին:*
- *Նա տվեց նրանց սովորեցնելու և մկրտելու Իր իշխանությունը: Այդ իշխանությունը կոչվում է քահանայություն:*
- *Իր մահից ու Հարությունից հետո, Նա շարունակեց առաջնորդել Առաքյալներին՝ հայտնության միջոցով:*

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և19 էջերում:

Հիսուսը քահանայություն շնորհեց Իր Առաքյալներին:

Իր Հարությունից հետո, Հիսուս Քրիստոսը առաջնորդում էր Իր Առաքյալներին հայտնության միջոցով: Աստվածաշունչը շատ եղանակներ է նշում, որոնցով Նա շարունակում էր ղեկավարել Իր Եկեղեցին (տես Գործք Ժ; Հայտնություն Ա.1): Այդպիսով, Հիսուս Քրիստոսի Եկեղեցին ղեկավարվում էր ոչ թե մարդկանց, այլ Աստծո կողմից:

Մեծ Ուրացություն

Հիսուս Քրիստոսի մահից հետո, չար մարդիկ հալածեցին ու սպանեցին Եկեղեցու շատ անդամների: Եկեղեցու որոշ անդամներ էլ շեղվեցին Հիսուս Քրիստոսի և Նրա Առաքյալների ուսուցանած սկզբունքներից: Առաքյալները սպանվեցին, իսկ քահանայության իշխանությունը, ներառյալ Եկեղեցին ղեկավարելու և Եկեղեցու համար հայտնություն ստանալու բանալիները, վերցվեցին երկրի վրայից: Քանի որ Եկեղեցին այլևս չէր ղեկավարվում քահանայության իշխանությամբ, սխալ գաղափարներ սողոսկեցին Եկեղեցու ուսմունքների մեջ: Լավ մարդիկ և շատ ճշմարտություններ մնացին, սակայն ավետարանը, ինչպես հաստատվել էր Հիսուս Քրիստոսի կողմից, կորսվեց:Այդ ժամանակաշրջանը կոչվում է Մեծ Ուրացություն:

Հիսուս Քրիստոսի Առաքյալների մահվան հետ կրկին ճշմարտությունը կորսվեց:

Այդ ուրացության արդյունքում շատ եկեղեցիներ կազմավորվեցին իրար հակասող ուսմունքներով: Այդ ժամանակաշրջանում, շատ տղամարդիկ ու կանայք էին փնտրում ճշմարտությունը, սակայն նրանք անկարող էին գտնել այն: Շատ լավ մարդիկ հավատացին Աստծուն և Հիսուս Քրիստոսին, նրանք փորձում էին հասկանալ և ուսուցանել ճշմարտությունը, սակայն չունեին ամբողջ ավետարանը կամ քահանայության իշխանությունը: Արդյունքում, յուրաքանչյուր սերունդ ժառանգում էր ուրացության վիճակը, որի ժամանակ մարդկանց վրա ազդում էր այն, ինչը նախորդ սերունդներն էին փոխանցել իրենց, ներառյալ Քրիստոսի ավետարանի փոփոխությունները:

Որոշ ոգեշնչված մարդիկ, ինչպես օրինակ՝ Մարտին Լյութեր Քինգը և Ջոն Կալվինը, հասկանում էին, որ արարողակարգերն ու վարդապետությունները փոփոխվել կամ կորել են: Նրանք փորձում էին բարեփոխել եկեղեցիները, որոնց նրանք պատկա-

Աստված գիտեր, որ ուրացություն կլինի: Հին Կտակարանի մարգարեի միջոցով Նա ասել է.

«Ահա օրեր են գալիս . . . որ սով պիտի ուղարկեմ երկրի վրա, ոչ թե հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու.

Եվ [մարդիկ] պիտի թափառեն ծովից մինչև ծով և հյուսիսից մինչև արևելք, և նորանք պիտի ման գան Տիրոջ խոսքը որոնելու համար, և պիտի չգտնեն»:

Ամովս Ը.11–12

նում էին: Ինչևէ, առանց քահանայության իշխանության Քրիստոսի ավետարանը չէր կարող վերադառնալ իր սկզբնական ձևին: Վերականգնում էր անհրաժեշտ:

Ավետարանի վերականգնումը

1820թ., ինչպես դարեր շարունակ եղել էր, մեր Երկնային Հայրը կրկին մարգարե ընտրեց, որպեսզի երկրի վրա վերականգնի ավետարանն ու քահանայությունը: Այդ մարգարեի անունը Զոզեֆ Սմիթ էր: Լինելով պատանի, Զոզեֆը խճճվել էր իր տարածքի եկեղեցիների տարբերությունների մեջ և ցանկանում էր իմանալ, թե որ եկեղեցին է ճիշտ: Գիտակցելով, որ ինքն իմաստության պակաս ունի, նա հետևեց Աստվածաշնչի խորհրդին. «Եթե մեկը ձեզանից իմաստության պակասություն ունի, թող խնդրե Աստուածանից, որ ամենին տալիս է առատությամբ և չէ նախատում, և կտրուի նորան» (Հակոբոս Ա.5):

Զոզեֆ Սմիթը որոշեց հարցնել Աստծուն, թե ինչ պետք է ինքն անի: Երբ Զոզեֆն աղոթեց ճշմարտությունն իմանալու համար, մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին իրեն: Հիսուսն ասաց Զոզեֆին, որ չմիանա ոչ մի եկեղեցու, քանի որ «դրանք բոլորն էլ սխալ էին» և «նրանք դեպի ինձ են հակված իրենց շուրթերով, մինչդեռ նրանց սրտերը հեռու են ինձանից, նրանք վարդապետություններ են ուսուցանում, որոնք մարդկանց պատվիրաններն են, և նրանք ունեն աստվածայնության կերպարանք, բայց ուրանում են նրա զորությունը» (Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.19):

Զոզեֆ Սմիթը տեսավ մեր Երկնային Հորն ու Հիսուս Քրիստոսին: Այդ մասին նա ասել է.

«Ես տեսա լուսեղեն մի սյուն իմ գլխավերևում, արևի պայծառությունը գերազանցող, որն աստիճանաբար իջնում էր ցած, մինչև որ ընկավ իմ վրա . . .

Երբ լույսը հանգչեց ինձ վրա, ես տեսա երկու Անձնավորություն, որոնց պայծառությունն ու փառքը ամեն նկարագրությունից վեր էր, կանգնած ինձանից բարձր, օդի մեջ: Նրանցից մեկը խոսեց ինձ հետ, դիմելով ինձ անունով, և ասաց՝ մատնացույց անելով մյուսին. – Սա է Իմ Սիրելի Որդին: Լսի՛ր Նրան»:

Զոզեֆ Սմիթ—Պատմություն 1.16–17

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Զոզեֆ Սմիթին, ինչպես ներկայացվում է Վերականգնում ֆիլմում:

Ինչպես Աստված արել էր Ադամի, Նոյի, Աբրահամի, Մովսեսի և այլ մարգարեների դեպքում, Նա կանչեց Զոզեֆ Սմիթին, որպեսզի մարգարե լինի, որի միջոցով էլ ավետարանն ամբողջությամբ վերականգնվեց:

Քահանայության Վերականգնումը

1829թ. Զոզեֆ Սմիթը ստացավ այն նույն քահանայության իշխանությունը, որը Հիսուս Քրիստոսը տվել էր Իր Առաքյալներին: Հովհաննես Մկրտիչը, որը մկրտել էր Հիսուսին, հայտնվեց Զոզեֆ Սմիթին և նրան շնորհեց Ահարոնյան Քահանայությունը, կամ ավելի ցածր քահանայությունը: Ավելի ուշ Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը (Հիսուս Քրիստոսի նախկին երեք Առաքյալները) հայտնվեցին Զոզեֆ Սմիթին և նրան շնորհեցին Մելքիսեդեկյան Քահանայությունը, կամ բարձրագույն քահանայությունը:

Քահանայության իշխանությունը ստանալուց հետո, Զոզեֆ Սմիթին պատվիրվեց կազմավորել Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա: Նրա միջոցով, Հիսուս Քրիստոսը կրկին կանչեց Տասներկու Առաքյալներին:

Հիսուս Քրիստոսն ուղարկեց Հովհաննես Մկրտչին, իսկ այնուհետև Իր երեք Առաքյալներին, որպեսզի քահանայության իշխանություն շնորհեն Զոզեֆ Սմիթին:

Ինչպես Հիսուս Քրիստոսն էր Իր Հարությունից հետո հայտնության միջոցով առաջնորդում Իր Առաքյալներին, Նա շարունակում է ղեկավարել Եկեղեցին այսօր կենդանի մարգարեների և առաքյալների միջոցով: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահը Աստծո կողմից ընտրված մարգարե է այսօր: Նա, իր խորհրդականները և Տասներկու Առաքյալները կրում են քահանայության իշխանությունը, որը նախկինում կրել են բոլոր մարգարեներն ու առաքյալները: Այդ տղամարդիկ մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ են:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Պետրոսը, Հակոբոսն ու Հովհաննեսը՝ Հիսուս Քրիստոսի Առաքյալները, Մելքիսեդեկյան Քահանայություն շնորհեցին Զոզեֆ Սմիթին:

Մորմոնի Գիրքը

Որպես ավետարանի Վերականգնման մի մաս, Աստված ի հայտ բերեց Մորմոնի Գիրքը. Եվս մեկ վկայություն Հիսուս Քրիստոսի մասին: Աստծո զորությամբ, Զոզեֆ Սմիթը թարգմանեց այդ գիրքը ոսկե թիթեղների վրա գրված հնագույն հիշատակարանից: Մորմոնի Գիրքը «մի հիշատակարան է՝ Աստծո գործերի մասին, Ամերիկաների հնագույն բնակիչների հետ և պարունակում է հավիտենական ավետարանի լրիվությունը» (Մորմոնի Գրքի նախաբան):

Մորմոնի Գիրքը զորեղ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին: Այն օգնում է մեզ հասկանալ Նրա ուսմունքները, ներառյալ Աստվածաշնչում տրված ուսմունքները:

Մորմոնի Գիրքը համոզիչ ապացույց է Զոզեֆ Սմիթի միջոցով կատարված ավետարանի Վերականգնման մասին: Դուք ինքնուրույն կարող եք իմանալ, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է: Այդ գիտելիքը ձեռք բերելու համար, դուք պետք է կարդաք այն, խորհեք դրա ուղերձի շուրջ, և ցանկանաք իմանալ, արդյո՞ք այն ճշմարիտ է: Դուք պետք է խնդրեք ձեր Երկնային Հորը, որպեսզի Նա հաստատի, որ դա Իր խոսքն է: Եթե այդպես վարվեք, Նա Սուրբ Հոգու միջոցով կհայտնի ձեզ, որ այն ճշմարիտ է:

Դուք կարող եք իմանալ, որ այն ինչ միսիոներներն ուսուցանում են, ճշմարիտ է, եթե կարդաք և աղոթեք Մորմոնի Գրքի վերաբերյալ.

«Եթե դուք հարցնեք մաքուր սրտով, անկեղծ միտումով, հավատք ունենալով առ Քրիստոս, նա կհայտնի ձեզ դրանց ճշմարտության մասին Սուրբ Հոգու զորությամբ:

Եվ Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ»:

Մորոնի 10.4–5

Երբ իմանաք, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է, դուք նաև Սուրբ Հոգու օգնությամբ կիմանաք, որ Զոզեֆ Սմիթը Աստծո մարգարե էր, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է նրա միջոցով, և որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին այսօր առաջնորդում են մարգարեն և առաքյալները:

*Կարմիր գույնով բառերը սահմանվում են 18 և 19 էջերում:

Հիսուս Քրիստոսի կատարած այցը Ամերիկաներ գրված է Մորմոնի Գրքում:

Ինչպե՞ս կարող եմ իմանալ:

Դուք կարող եք իմանալ, որ այս ուղերձը ճշմարիտ է: Եթե աղոթքով հարցնեք ձեր Երկնային Հորը, Սուրբ Հոգու միջոցով կարող եք պատասխան ստանալ Նրանից: Սուրբ Հոգին նաև կոչվում է Աստծո Հոգի, և Նրա դերերից մեկը ճշմարտության մասին վկայելն է:

Ինչպե՞ս պետք է ես աղոթեմ:

- *Դիմեք ձեր Երկնային Հորը:*
- *Հայտնեք ձեր սրտի զգացումները (երախտագիտությունը, հարցերը, խնդրելով հաստատել, որ Մորմոնի Գիրքը և միսիոներների ուսուցանածը ճշմարիտ է):*
- *Փակեք աղոթքը («Հիսուս Քրիստոսի անունով, ամեն»):*

Այդ գիտելիքը կարող է լինել զարմանահրաշ և կյանքը փոխող, սակայն այն սովորաբար գալիս է որպես հանգիստ հավաստիացում՝ առանց Աստծո զորության տպավորիչ դրսևորման: Սուրբ Հոգին հաստատում է ճշմարտությունը զգացումների, մտքերի և ունեցած տպավորությունների միջոցով: Ինչպես ուսուցանվում է Աստվածաշնչում. «Հոգու պտուղն է՝ սեր, ուրախություն, խաղաղություն, երկայնամտություն, քաղցրություն, բարություն, հավատք, հեզություն, [և] ժուժկալություն» (Գաղատացիս Ե.22–23): Սուրբ Հոգուց եկած այդ զգացումները անհատական հայտնություն են ձեզ, որ Զոզեֆ Սմիթի միջոցով վերականգնված Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է: Այնուհետև դուք կարող եք ընտրել, արդյո՞ք կապրեք ձեր ստացած գիտելիքի հետ ներդաշնակության մեջ:

Անկեղծ աղոթքի միջոցով դուք կարող եք իմանալ ճշմարտությունը:

Տերմինների ցանկ

Ահարոնյան Քահանայություն Ավելի ցածր քահանայություն: Այս քահանայությունը ներառում է մկրտելու իշխանություն և Աստվածաշնչի Հին Կտակարանում կոչվել է Ահարոնի անունով:

Առաքյալ Դաշտոն, որը Հիսուս Քրիստոսը տվեց տասներկու տղամարդկանց, որոնց երկրի վրա Իր ծառայության ընթացքում Նա ընտրել էր որպես Իր ամենամտերիմ գործընկերներ և, որոնց Նա տվել էր Իր անունով գործելու իշխանություն: Ինչպես հին օրերում, Առաքյալը Հիսուս Քրիստոսի հատուկ վկան է և իշխանություն ունի Նրանից:

Ավետարան Մեր Երկնային Հոր ծրագիրը, որը պետք է օգնի մեզ խաղաղություն ունենալ այս կյանքում և ուրախություն՝ հավերժության մեջ: Ավետարանը կենտրոնացած է Հիսուս Քրիստոսի Քավության վրա, և մեզանից պահանջում է հավատալ Նրան, ապաշխարել, մկրտվել, ստանալ Սուրբ Հոգին և համբերել մինչև վերջ:

Արարողություն Սրբազան, հաստատված կարգով կատարվող գործողություն, որը կատարվում է քահանայության իշխանությամբ: Օրինակ, մկրտությունը:

Հայտնություն Աստծո և Նրա զավակների միջև հաղորդակցություն, որը սովորաբար կատարվում է Սուրբ Հոգու միջոցով: Անհատները կարող են հայտնություն ստանալ՝ իրենց կյանքն ուղղորդելու համար, սակայն միայն մարգարեն կարող է հայտնություն ստանալ ամբողջ աշխարհի համար: Հայտնությունը գալիս է տարբեր ձևերով, սակայն հիմնականում այն գալիս է մտքերի, զգացումների և տպավորությունների ձևով:

Հարություն Ֆիզիկական մահից հետո հոգու վերամիավորումը կատարյալ դարձած մսից ու ոսկորներից կազմված ֆիզիկական մարմնի հետ: Հիսուս Քրիստոսը առաջինն էր, որ հարություն առավ:

Մելքիսեդեկյան Քահանայություն Ավելի բարձր քահանայություն: Աստվածաշնչի Հին Կտակարանում այն կոչվել է Մելքիսեդեկի անունով, որը արդար քահանայապետ և թագավոր էր:

Մկրտություն Էական քայլ մեղքերի թողություն ստանալու համար: Մկրտվելով և քահանայության իշխանությամբ հաստատվելով, մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ: Ընկղմամբ մկրտությունը նշանակում է, որ մկրտվող մարդը մի քանի վայրկյանով ընկղմվում է ջրի մեջ:

Մկրտությունը ցույց է տալիս Քրիստոսի օրինակին հետևելու և Աստծո հետ ուխտեր կապելու մեր պատրաստակամությունը:

Սուրբ Հոգի Նաև կոչվում է Աստծո Հոգի և Մխիթարիչ: Նա վկայում է Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին, հայտնում և ուսուցանում է ճշմարտությունը:

Վերականգնում Ինչ-որ բան իր նախկին վիճակին բերել. վերահաստատել այն, կրկին նորովի ետ բերել այն: Երկրի վրայից ճշմարտությունն ու իշխանությունը կորսվելուց հետո, ավետարանը վերականգնվեց Մարգարե Զոզեֆ Սմիթի միջոցով: Վերականգնումը տարբերվում է բարեփոխումից նրանով, որ *բարեփոխում* նշանակում է ձևափոխել գոյություն ունեցող կազմակերպությունը կամ սահմանված կարգը՝ փորձելով վերադարձնել այն իր նախնական վիճակին, մինչդեռ *վերականգնել* նշանակում է ամբողջովին վերահաստատել նախկինում գոյություն ունեցած կազմակերպությունը կամ հաստատված կարգը:

Ուրացություն Երբ մարդը, Եկեղեցին կամ մի ամբողջ ազգ հեռանում կամ հրաժարվում է Հիսուս Քրիստոսի ավետարանից: Ուրացությանը հետևում են բաժանումներ, խառնաշփոթ և կորսվում է քահանայության իշխանությունը կամ Աստծո անունով գործելու իրավունքը:

Քահանայություն Աստծո իշխանություն և զորություն: Աստված տալիս է այս զորությունը Իր անունով գործելու համար: Ահարոնյան Քահանայությունը վերականգնվեց Զոզեֆ Սմիթին Հովհաննես Մկրտչի կողմից, որը մկրտեց Հիսուսին: Մելքիսեդեկյան Քահանայությունը վերականգնվեց Հիսուսի Տասներկու Առաքյալներից երեքի՝ Պետրոսի, Հակոբոսի և Հովհաննեսի կողմից:

Քավություն Իրադարձություն, որը հնարավորություն է ընձեռում մեզ հաշտվել Աստծո հետ: Քավել նշանակում է պատիժ կրել մեղքի համար, որով ապաշխարող մեղավորից հեռացվում է մեղքի ազդեցությունը: Հիսուս Քրիստոսը միակն էր, որը կարող էր կատարյալ Քավություն կատարել ողջ մարդկության համար: Նրա Քավությունը ընդգրկում էր Նրա տառապանքը մեր մեղքերի համար, Նրա արյուն հեղելը, Նրա մահն ու Հարությունը: Քավության շնորհիվ ամեն ոք, ով ապրել է, հարություն կառնի: Քավությունը նաև մեզ հնարավորություն է տալիս մեր մեղքերից թողություն ստանալ և հավերժ ապրել Աստծո հետ:

Լրացուցիչ ուսումնասիրություն

Հետևյալ հարցերն ու սուրբ գրությունները կօգնեն ձեզ ավելին սովորել այս քրոջյուրում տրված սկզբունքների մասին և խորհել դրանց շուրջ: Ցանկը ամբողջական չի. սուրբ գրությունների տողատակի ծանոթագրությունները և խաչաձև վկայակոչումները կուղղորդեն ձեզ լրացուցիչ հատվածներին ու աղբյուրներին:

Ի՞նչ է նշանակում ձեզ համար, որ Աստված ձեր Երկնային Հայրն է:

Մաղաքիա Բ.10 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Եբրայեցիս ԺԲ.9–10 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Ո՞րն է մարգարեի դերը: Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Աստված խոսում է մարգարեների հետ:

Ամովս Գ.7 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

Հակոբ 4.4–6 (Մորմոնի Գիրք, էջ 125)

Ի՞նչ է նշանակում ունենալ քահանայության իշխանություն: Ինչպե՞ս է որևէ մեկը ստանում այդ իշխանությունը:

Մատթեոս Ժ.1 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Հովհաննես ԺԵ.16 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Ի՞նչ է տեղի ունենում, երբ այդ իշխանությունը կորսվում է:

Ամովս Ը.11–12 (Աստվածաշունչ, Հին Կտակարան)

1 Նեփի 13.24–29 (Մորմոնի Գիրք, էջ 25–26)

Գիտեի՞ն արդյոք Հիսուսի Առաքյալները, որ ուրացություն պետք է լինի։
Գործք Ի.28–31 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
Բ Թեսաղոնիկեցիս Բ.2–3 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)
Բ Տիմոթեոս Դ.3–4 (Աստվածաշունչ, Նոր Կտակարան)

Ի՞նչ է նշանակում ձեզ համար, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը վերականգնվել է Զոզեֆ Սմիթի միջոցով։
Մարգարե Զոզեֆ Սմիթի Վկայությունը (բրոյշուր)

Ի՞նչ է Մորմոնի Գիրքը։ Ինչպե՞ս է այն վկայում Զոզեֆ Սմիթի մարգարե կանչվելու մասին։
Մորմոնի Գրքի տիտղոսաթերթ
Մորմոնի Գրքի նախաբան

Ո՞րն է Սուրբ Հոգու դերը։
Ալմա 5.45–47 (Մորմոնի Գիրք, էջ 233–234)
Մորոնի 10.3–5 (Մորմոնի Գիրք, էջ 591–592)

Երկրպագեք մեզ հետ

Եկեք և տեսեք, թե ինչպես կարող է Վերականգնված Ավետարանը օրհնել ձեր կյանքը

Հաղորդության ժողովը երկրպագության հիմնական ծառայությունն է: Այն սովորաբար տևում է մեկ ժամից մի փոքր ավել և հիմնականում բաղկացած է հետևյալ մասերից.

Օրհներգեր. Երգում են ներկա գտնվողները: (Հիմների գրքերը տրամադրվում են:)

Աղոթքներ. Ասվում են Եկեղեցու տեղի անդամների կողմից:

Հաղորդություն. Հացն ու ջուրն օրհնվում և բաժանվում է ներկաներին՝ ի հիշատակ Հիսուս Քրիստոսի Քավության:

Բանախոսներ. Սովորաբար նախապես նշանակված մեկ կամ երկու անդամներ խոսում են ավետարանի թեմաներով:

Հագուստ. Տղամարդիկ և տղաները հիմնականում հագնում են կոստյում կամ գեղեցիկ տաբատ, վերնաշապիկ և փողկապ: Կանայք և աղջիկները հագնում են զգեստ կամ կիսաշրջազգեստ:

Երկրպագության ծառայությունների ընթացքում նվիրատվություններ կատարելու անհրաժեշտություն չկա:

Մենք նաև հրավիրում ենք ձեզ հաճախել մյուս ժողովներին, ըստ ձեր հետաքրքրությունների և տարիքային խմբի: Այդ ժողովների հերթականությունն ու առկայությունը կարող է տարբեր լինել:

Կիրակնօրյա Դպրոց. Դասեր սուրբ գրություններն ու ավետարանի վարդապետություններն ուսումնասիրելու համար:

Քահանայության Ժողովներ. Դասեր 12 և բարձր տարիքի տղամարդկանց և տղաների համար:

Սփոփող Միություն. Դասեր 18 և բարձր տարիքի կանանց համար:

Երիտասարդ Կանայք. Դասեր 12–18 տարեկան աղջիկների համար:

Երեխաների Խումբ. Խմբային դասեր 3–11 տարեկան երեխաների համար: 18 ամսականից մինչև 3 տարեկան երեխաների համար հաճախ գործում է մանկական սենյակը:

Հաղորդության ժողովի ժամերը. _____

Հավաքատան հասցեն. _____

_____

Ի՞նչ պետք է ես անեմ:

- *Կարդացեք Մորմոնի Գիրքը: Առաջարկված գրականությունը.* _____

- *Աղոթեք՝ իմանալու համար, որ Ջոզեֆ Սմիթը մարգարե էր և Մորմոնի Գիրքը Աստծո խոսքն է:*

- *Հաճախեք եկեղեցի:*

- *Վճռեք, թե արդյոք կիետևեք Փրկչին՝ մկրտվելով: Մկրտության ամսաթիվը.* _____

- *Այցելեք www.mormon.org Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին ավելին սովորելու համար:*

- *Շարունակեք հանդիպել միսիոներներին՝ մեր օրերի մարգարեների միջոցով Աստծո կողմից վերականգնված ճշմարտությունների մասին ավելին սովորելու համար:*

  Հաջորդ պայմանավորվածությունը. _____

  Միսիոներների անուններն ու հեռախոսի համարները:

_____

_____

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

www.mormon.org

Նկարներ
Շապկի կազմը. *Կորած գառը,* Դել Փարսոնի: © Del Parson. Սի բազմացրեք:
էջ 5՝ Հատված *Նայիա մարգարեն կանխատեսում է Քրիստոսի ծնունդը* նկարից, Հարի Անդերսոնի
էջ 6՝ Հատված *Քրիստոսը կարգում է տաճարներու Աստքայլերին* նկարից, Հարի Անդերսոնի
էջ 13՝ Հատված *Մեքիսեդեկյան Քահանայության վերականգնումը* նկարից, Քենեթ Ռայլիի
էջ 14՝ Հատված *Հիսուս Քրիստոսը այցելում Ամերիկաները* նկարից, Ջոն Սբոտի
էջեր 17, 22, 23 Marina Lukach

© 2005 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Printed in Germany. Անգլերենի հաստատումը՝ 01/06: Թարգմանության հաստատումը՝ 01/06: *The Restoration of the Gospel of Jesus Christ*-ի թարգմանությունը: Armenian.

ARMENIAN
4 02011 32201 8
01132 201